ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15.02.2011 թ.
ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ա. Բարսեղյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ և ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:

Մարզխորհուրդը վարում էր ՀՀ Արարատի մարզպետ Է. Բարսեղյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. ՀՀ Արարատի մարզպետ Է. Բարսեղյանի 2010 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն:

   /Զեկ.՝ ՀՀ Արարատի մարզպետ Է. Բարսեղյան/

2. Մարզի համայնքների 2010 թվականի տարեկան բյուջեների կատարման և 2011 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2010 թվականի նկատմամբ:

   /Զեկ.՝ ֆին. և սոցիալ-տնտ. զարգացման վարչ. պետ Գ. Եղիազարյան/

3. Գարնանային գյուղատնտեսական և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին:

   /Զեկ.՝ գյուղ. և բնապահ. վարչ. պետ Տ. Վիրաբյան/

Այլ հարցեր՝

- "Մարզի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթման, ինչպես նաև շենքերի ու շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ պաշտոնատար անձանց կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունները չկատարելու մասին" Արարատի մարզի դատախազի միջնորդագրի մասին:

/Զեկ.՝ քաղաքաշինության վարչ. պետ Ռ. Մկրտչյան/

- Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին:

/Զեկ.՝ Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ա. Լալայան/

1. ***Լսեցին՝***

<< Արարատի մարզպետ Է. Բարսեղյանի 2010թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին հաշվետվությունը ներկայացրեց մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը

/ կցվում է /

Արտահայտվեցին՝

Արտաշատի քաղաքապետ Գ. Մուրադյանը, Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանը, Խաչփար համայնքի ղեկավար Ղ. Մարտիրոսյանը:

<u>Հանձնարարվեց՝</u>

1. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Գ. Ավետիսյանին և առողջապահական հիմնարկների տնօրեններին՝ ավելի աչալուրջ գտնվել բնակիչների սպասարկման հարցում՝ բացառելով տհաճ միջադեպերը:
2. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ. Վիրաբյանին՝ անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների նկատմամբ:

3. ՋՕԸ-երի պետերին՝
   - սերտորեն համագործակցել համայնքների ղեկավարների հետ, հաճախակի կազմակերպել նրանց հետ հանդիպումներ՝ ողոգման բնագավառում առկա և առաջացող հիմնախնդիրներին հրատապ լուծում տալու համար.
   - ընդունել ի գիտություն՝ ջրամատակարարող այն ընկերությունների ղեկավարները, որոնք խոչընդոտներ կստեղծեն գյուղացիական ընկերությունների համար, կենթարկվեն պատասխանատվության:

4. Անասնաբուժական ծառայություններին՝
   ժամանակին և արդյունավետ կազմակերպել կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումներ՝ այդ հարցում համագործակցելով համայնքների ղեկավարների հետ:
5. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Հակոբյանին և համայնքների ղեկավարներին՝
   ձեռնարկել միջոցառումներ՝ դպրոցների ջեռուցման և դասասենյակները համապատասխան ջերմությամբ ապահովելու ուղղությամբ:

6. Ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին՝
   վարչության աշխատանքները կազմակերպել առավել արդյունավետ՝ համայնքների բյուջեների մուտքագրումը 100%-ով ապահովելու ուղղությամբ՝ մեծ ուշադրություն դարձնելով սեփական եկամուտների հավաքագրմանը:

2. Լսեցին՝

Մարզի համայնքների 2010 թվականի տարեկան բյուջեների կատարման և 2011 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2010 թվականի նկատմամբ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը: / կցվում է /

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

1. Ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին՝

ավելի հաճախակի կատարել համայնքների ղեկավարների կողմից իրականացվող ֆինանսական գործունեությանը վերաբերող ուսումնասիրություններ՝ անհրաժեշտ մեթոդական օգնություն ցուցաբերելով նրանց:

3. *Լսեցին՝*

Գարնանային գյուղատնտեսական և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ. Վիրաբյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

1. ՋՕԸ-ի տնօրեններին՝

ա/ հաշվի առնելով եղանակային պայմանները՝ մինչև ապրիլի 10-ը ավարտել ոռոգման շրջանի նախապատրաստական աշխատանքները.

բ/ ջրատարների, պոմպակայանների, խորքային հորերի մաքրման և վերանորոգման աշխատանքների ծավալները և ժամանակացույցը ըստ համայնքների համաձայնեցնել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ:

2. Համայնքների ղեկավարներին՝

համագործակցել և աջակցել ջրօգտագործող ընկերություններին՝ ոռոգման շրջանի նախապատրաստական աշխատանքները որակով և ժամանակին ավարտելու, ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրումը 100 %– ի հասցնելու հարցում:

3. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Տ. Վիրաբյանին՝

աջակցություն ցույց տալ անասնաբուժական ծառայություններին՝ կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումները ժամանակին և արդյունավետ կազմակերպելու հարցում:

Այլ հարցեր՝

- "Մարզի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթման, իմչպես նաև շենքերի ու շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ պաշտոնատար անձանց կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունները չկատարելու մասին" Արարատի մարզի դատախազի միջնորդագրի մասին քաղաքաշինության վարչության պետ Ռ. Մկրտչյանի զեկուցումը:

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Մ. Բարսեղյանը:

Նորաշեն համայնքի ղեկավար Ա. Սարգսյանը

Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին հայտարարությամբ հանդես եկավ տեղական ինքնակառավարման և համայնքնային ծառայության հարցերի բաժնի պետ Ա. Լալայանը:

Մարզխորհրդի նիստը ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ